

Համարը N 423	Տեսակը Մայր
Տիպը Որոշում	Կարգավիճակը Գործում է
Սկզբնաղբյուրը ԼՂՀՊՏ-ում չի հրապարակվել	Ընդունման վայրը Ստեփանակերտ
Ընդունող մարմինը ԼՂՀ կառավարություն	Ստեփանակերտ 16.11.2004
Ստորագրող մարմինը ԼՂՀ Վարչապետ	Ստորագրման ամսաթիվը 16.11.2004
Վավերացնող մարմինը	Վավերացման ամսաթիվը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 16.11.2004	Ուժը կորցնելու ամսաթիվը

ԼՂՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԶՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԸ  
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԼԵՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

"16" նոյեմբերի 2004թ.

N 423

ք.Ստեփանակերտ

ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լենային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 19-րդ հոդվածին և 121-րդ հոդվածի 5-րդ մասի 38-րդ կետին համապատասխան՝ Լենային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո**  
**2 ու մ է.**

Հաստատել **ջրերի** հաշվառման այլընտրանքային կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ ԿԱՐԳԱԴԵՏ

Ա.ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հավելված  
ԼՂՀ կառավարության  
2004թ. նոյեմբերի "16"-ի  
թիվ 423 որոշման

Կ Ա Ր Գ

**ԶՐԵՐԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

1. Սույն կարգով կանոնակարգվում է Լենային Ղարաբաղի Հանրապետության տարածքում ջրային ռեսուրսներից ջրառի ծավալների այլընտրանքային հաշվառումը (այսուհետ՝ հաշվառում) հաշվարկային եղանակով՝ ջրաչափերի և (կամ) ջրաչափական դիտակետերի բացակայության, ինչպես նաև այն դեպքում, երբ դրանք չեն համապատասխանում սահմանված տեխնիկական ու շահագործման պայմաններին կամ գտնվում են անսարք վիճակում:

2. Հաշվառումն իրականացնում է Լենային Ղարաբաղի Հանրապետության ջրակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից՝ ջրօգտագործողի անմիջական մասնակցությամբ, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն:

3. Արձանագրության մեջ ներկայացված հաշվառման արդյունքները հիմք են հանդիսանում ջրօգտագործողի կողմից վարչական վիճակագրական հաշվետվությունը («Ջրօգտագործման մասին» 2-տա ձև (ջրտնտ) (տարեկան) լրացնելու համար և համարվում են ջրօգտագործման փաստացի ծավալներ՝ ջրօգտագործման վճարի հաշվարկման համար:

4. Հաշվառման արդյունքներն ուժի մեջ են մինչև ջրօգտագործողի կողմից ջրաչափերի և կամ ջրաչափական դիտակետերի տեղադրումը, որի մասին կազմվում է երկկողմանի ակտ՝ գործակալության և ջրօգտագործողի միջև:

5. Սույն կարգի համաձայն՝ ջրային ռեսուրսից իրականացված ջրօգտագործման ծավալը հաշվարկվում է ստորև նշված ելակետային տվյալների արտադրյալի հիման վրա՝

ա) ջրահոսքի արագություն, որի մեծությունը հաշվարկների համար ընդունվում է՝ ինքնահոս խողովակների համար՝ 1.5 մ/վրկ,

ճնշումային խողովակների համար՝ 2.0 մ/վրկ,

բաց հունով ջրանցքների համար՝ 1.2 մ/վրկ.

բ) ջրահոսքի գործող կտրվածք, որի մեծությունը հաշվարկների համար ընդունվում է՝

խողովակների համար՝ դրանց կտրվածքի մակերեսը,

բաց հունով ջրանցքի համար՝ ջրահոսքի հունի միջինացված բարձրության և լայնության արտադրյալը.

գ) ջրօգտագործման տևողություն (օր, ամիս, տարի):

6. Ջրօգտագործողի և գործակալության միջև ծագած տարաձայնությունները,

կապված քրեչիայունտրանքային հաշվառման կարգի կիրարկման հետ, քննարկվում են Լեռնային  
Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

**ԼՂՀ կառավարության աշխատակա  
զմի  
ղեկավար-նախարար**

**Ս. Գրիգորյան**